1.2015թ. սեպտեմբերին պատմության և իրավագիտության ֆակուլտետի 1-ին կուրսեցիներին ծանոթացրել ենք Հայագիտական կենտրոնի գրադարանային ֆոնդից, քարտարանից և էլեկտրոնային գրադարանից օգտվելու ձևերին:

2.ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հետ համատեղ տեղադրում ենք նյութեր “Հայագգ” էլեկտրոնային հանրագիտարանում:

3.Ստեղծել ենք Հայագիտական կենտրոնի, Ազգագրական սրահի ֆեյսբուքյան էջ: Տեղադրվել են ազգային ուստեստներին, արցախյան գորգերին, տարազին, երկրագործական իրերին վերաբերող նյութեր:

4.2016թ. մարտի 5-ին Հայագիտական կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է Նժդեհյան ընթերցումներ՝ նվիրված Գարեգին Նժդեհի ծննդյան 130-ամյակին, որին մասնակցել են զինվորականներ, հայագիտական ուղղվածություն ունեցող ամբիոնների դասախոսներ, ուսանողներ:

5.2016թ. մարտի 18-ին համալսարանի մեծ դահլիճում պատմության և իրավագիտության ֆակուլտետների ուսանողների մասնակցությամբ ներկայացվել է “Արցախյան 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հարսանեկան ծես” բեմադրությունը նվիրված ԼՂՀ հռչակման 25-ամյակին:

6.2016թ. ապրիլի վերջին կազմակերպվել է գրքերի և նկարների ցուցահանդես նվիրված Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին:

7.Կենտրոնը 2016թ. հունիսի 4-ին Պատմություն մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների և կուրսղեկ՝ Ն.Բաղդասարյանի հետ կազմակերպել է գիտաճանաչողական էքսկուրսիա Շուշի քաղաք: Ուսանողները հնարավորություն են ունեցել այցելել կերպարվեստի, գորգերի, պատմության և երկրաբանական թանգարաններ:

8.Կենտրոնում ստեծվել է ֆիլմադարան:

9.Կենտրոնի գրադարանային ֆոնդը համալրվել է 164 կտոր գրականությամբ, որից 91՝ հայերեն, 20՝ ռուսերեն, 10՝ օտար լեզվով և 43՝ ամսագիր:

10.Կենտրոնում գործում է հայագիտական ուղղվածություն ունեցող էլեկտրոնային գրադարանը, որը շարունակաբար լրացվում է նոր գրականությամբ: Զուգահեռ կազմվում է քարտարան:

11. Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնի ընթերցողների թիվը կազմել է 1235 :

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ *Կենտրոնի վարիչ՝ Անահիտ Արամայիսի Աղապյան*

ԱրՊՀ-ում գործում է չորս կենտրոն, որոնք կցված են կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնին: Հիմնական մասնաշենքում գործում են երեք՝ ակ. Աղանբեկյանի և Մ. Զուլիաճեանի անվան կենտրոնները և դ 53-րդ համակարգչային լսարանը, իսկ երկրորդ մասնաշենքում դ 23-րդ լսարանը :

Տեղադրվել է ինտերակտիվ գրատախտակ, պրոյեկտոր: Այդ ամենը հնարավորություն է տալիս նոր տեխնոլոգիաների կիրառմամբ անցկացնել և բարձրացնել դասավանդման մակարդակը: 2015-2016թթ. ուսումնական տարում ավելացվել են համակարգիչների թիվը և դարձել է 15 հատ: Երկրորդ մասնաշենքի 23-րդ համակարգչային կենտրոնում՝ կազմակերպվում են պարապմունքներ բանասիրական, բնագիտության, պատմության և իրավագիտության, տնտեսագիտության ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտությունների համար: Համակարգչային կենտրոնում կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքների համաձայն հաստատված գրաֆիկի:

Կենտրոնների միջև գործում է ներքին ցանցը, որն ապահովում և հեշտացնում է աշխատանքի կազմակերպման բարձր մակարդակը:

ՍՀԵՐ ԶՈՒԼՀԱՃԵԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՎ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ **ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼՍԱՐԱՆՆԵՐ** *Կենտրոնի վարիչ՝ Ս.Զ.Ավանեսյան*

2015-2016 ուս.տարում ստեղծվեց Հայ կրթական հիմնարկության համակարգչային լսարանը: Լսարանը ապահովված է 17 համակարգչով, մեկ տպիչ սարքով և մեկ պրոյեկտորով, որոնց առկայությունը նպաստում է դասապրոցեսների բարձր մակարդակով անցկացմանը:

Լսարանները ապահովվում են „Բնագիտության”, „Տնտեսագիտության”, „Պատմության և իրավագիտության”, „Բանասիրական”, „Մանկավարժություն և Սպորտի” ֆակուլտետների բակալավրիատի, մագիստրատուրայի և հայցորդների համապատասխան ուսումնական պարապմունքները:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում ամբիոնի ծանրաբեռնվածության համաձայն կազմվում է դասընթացների գրաֆիկ՝ բացառելով համընկումները:

Յուրաքանչյուր մասնագիտական առարկաների համար կան համապատասխան ծրագրային փաթեթներ: Տարվա ընթացքում հետևում են համակարգիչների անսարքության վերացմանը:

Կատարվում է լաբորատոր աշխատանքների թարմացումներ և անհրաժեշտության դեպքում լաբորատոր աշխատանքների ժամանակ օգնում են ուսանողներին: Հնարավորության սահմաններում կուրսային, ավարտական և ինքնուրույն աշխատանքների կատարման համար ուսանողներին տրամադրում են լրացուցիչ պարապմունքների գրաֆիկ:

Ամեն տարի ոչ մասնագետ դասախոսների հետ անց են կացվում խորհրդատվություններ համակարգչային գիտելիքների վերաբերյալ: Պատասխանատվություն են կրում համակարգչային տեխնիկայի ճիշտ օգտագործման և պահպանման համար: Լսարանները ապահովում են ուսումնական պրոցեսին անհրաժեշտ սարքավորումներով /պրոյեկտոր, տեսախցիկ/:

Պարապմունքների ժամանակ ի հայտ եկած ծրագրային և տեխնիկական անսարքությունները գրանցում են և ժամանակին կատարում դրանց վերացումը:

ԱԿԱԴԵՄԻԿ Ա.Գ. ԱՂԱՆԲԵԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոն վարիչ՝ Օֆելյա Հայրապետյանի

Ա.Գ.Աղանբեգյանի անվան համակարգչային կենտրոնում անցկացվում են ինֆորմատիկայի բոլոր մեծ խմբերի գործնական և լաբորատոր պարապմունքները ամբողջ համալսարանի մակարդակով: Այդ իսկ պատճառով 2015-2016 ուս. տարում կենտրոնը համալրվել է P-IV մակնիշի համակարգիչներով: Այժմ կենտրոնում առկա են 29 հատ P-IV մակնիշի համակարգիչ:

1. Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում ըստ ծանրաբեռնվածության, կազմում են կենտրոնի գրադվածության գրաֆիկը, որը հնարավորություն է տալիս բացառելու պարապմունքների համընկումը:
2. Ըստ առարկայի պահանջի ապահովում են համապատասխան ծրագրային փաթեթների առկայություն՝ գրասենյակային ծրագրեր (Word, Excel,...), մաթեմատիկական փաթեթների ծրագրեր (MatLab, MatCAD, ...) ծրագրավորման համակարգեր (Pascal, C++ և այլն):
3. Կենտրոնում առկա է պարապմունքների անցկացման մատյանը:
4. Ամիսը մեկ անգամ անցկացնում են համակարգիչների պրոֆիլակտիկ ստուգումներ՝ կոշտ սկավառակի մաքրում ուսանողների կողմից ստեղծված ոչ պիտանի ֆայլերից, անհրաժեշտության դեպքում ապահովում են շարքից դուրս եկած սարքերի փոփոխությունը:
5. Հնարավորության սահմաններում (երբ կենտրոնը ազատ է պարապմունքներից) ուսանողներին տրամադրում են լրացուցիչ ժամեր կուրսային, ավարտական և ինքնուրույն աշխատանքներ, ինչպես նաև մագիստրոսական թեզեր ձևավորելու համար: Դա հնարավոր է հատկապես երկրորդ կիսամյակում: Անհրաժեշտության դեպքում ուսանողներին օգնում են առաջացած հարցերի լուծման ժամանակ:
6. Հաշվի առնելով դասախոսների դիտողություններն ու պահանջները, կազմակերպում են առաջացած անհարմարությունների վերացումը:
7. Գրանցում են ինչպես տեխնիկայի, այնպես էլ ծրագրային անսարքություններ, հետազայում դրանք վերացնելու համար:

8. Յուրաքանչյուր ուսումնական տարում կազմակերպվում են համակարգչային դասընթացներ՝ ԱրՊՀ դասախոսների համար:
9. Հաճախակի կազմակերպվում են դասընթացներ տարբեր նախարարությունների կողմից, որոնց ժամանակ համագործակցել եմ նրանց հետ:
10. Մշակել եմ լաբորատոր աշխատանքներ օֆիսային փաթեթների համար (Word, Excel):
11. Կենտրոնում պահպանվում է գրադարանից վերցված ինֆորմատիկայի վերաբերվող գրականությունը և ամսագրերը, որոնք օգտագործվում են դասախոսների և ուսանողների կողմից:
12. Կենտրոնը պատասխանատվություն է կրում բոլոր տիպի սարքերի պահպանման և ճիշտ օգտագործման համար:

ԳՐԱԴԱՐԱՆ

Վարիչ Լ.Ե. Առստամյան

Արցախի պետական համալսարանի գրադարանը համալսարանի առաջատար ստորաբաժանումներից է, որն ուսումնական և գիտական գործընթացներն ապահովում է գրականությամբ և տեղեկատվությամբ: Միտված է բարձրացնել ընթերցողների գիտական մակարդակը՝ ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական, բազմաբնույթ ու բազմաբովանդակ հարցերում: Գրադարանն աշխատում է բուհի համապատասխան կանոնադրությամբ և աշխատանքային պլանով:

Գրադարանի կառուցվածքի մեջ մտնում են հետևյալ բաժինները.

- Համալրում, մշակում, գրացուցակավորում, հաշվառում և բաշխում
- Սպասարկում և գրականության պահպանում
- Մատենագիտական սպասարկում
- Համակարգչային տեղեկատվություն
- Էլեկտրոնային և համացանցային սպասարկում

Գրադարանի աշխատանքային գործունեության գերագույն նպատակը բարձրակարգ և որակով սպասարկումն է, ելնելով եղած հնարավորություններից: Այս ոլորտում առաջնայինը ուսումնական գործընթացի և համալսարանի գիտական կյանքի հետմշտական կապի ապահովումն է, որը պահանջում է լայնածավալ և հետևողական աշխատանք: Հաշվետու 2015-2016 ուսումնական տարվա ընթացքում գրադարանի գրքային ֆոնդերը համալրվել են 1789 միավոր գրականությամբ, որից 1302 միավորը գուտ գրքեր են, 487 միավորը բրոշյուրներ ու տեղական բաժանորդագրությունից ստացված թերթերի և ամսագրերի կոմպլեկտներ, որի ընդհանուր արժեքը կազմում է 2.863.248 դր.96լ.: Համալրված գրականության 934 միավորը հայերեն է, 214-ը ռուսերեն, 154-ը օտար լեզուներով, որը ժամանակին մշակվել, գրացուցակավորվել, հաշվառվել և բախշվել է ըստ համապատասխան ստորաբաժանումների: Համալրված գրականության 210 միավորը՝ 1.022.655 դրամ արժողությամբ դրամական փոխանցումով է ձեռք բերված, 1579 միավորը՝ 1.840.593 դր.96լ. արժողությամբ՝ նվիրատվությամբ: Նշված ժամանակահատվածում դուրս է որպես հնամաշ գրվել 291 միավոր գիրք՝ 62.247 դրամ արժողությամբ: Համալրման աշխատանքների մի մասն էլ կազմում է բաժանորդագրությունը: Նշված ժամանակահատվածում գրադարանը բաժանորդագրվել է 18 անուն թերթեր և ամսագրեր, ամսավճարով, որոնք տարեվերջին կոմպլեկտավորվում և մուտքագրվում է գումարային հաշվառման գրանցամատյանում:

Գրադարանային ֆոնդերը համլրվել են հիմնականում նվիրատվությամբ. նվիրատվություններ են արել ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունը, Երևանի պետական տնտեսագիտական համալսարանը, ՀՀ ԲՈՏՀ-ի նախագահ Լ.Արզումանյանը, Խ.Արթուրյանի անվան պետական մանկավարժական համալսարանը, ԼՂՀ ՊԲ նախարարությունը, ՀՀ Փաստաբանների պալատը, Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը: Ընդհանուր գրքային ունեցվածքը կազմում է 104.807 միավոր, որից 94.165 միավորը գուտ գրքեր են, այդ թվում. հայերեն՝ 42.915, ռուսերեն՝ 45.744, օտար լեզվով՝ 5.506:

Գրադարանում գործում են հինգ լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն, երկու տեսակի՝ այբբենական և կարգային /սիստեմատիկ / գրացուցակներ, որոնք անընդհատ համալրվում են նոր ստացած գրքերի գրացուցակներով: Գրադարան մուտքագրած

գրականությունը և բաժանորդագրած թերթերի ու ամսագրերի ցուցակները տեղադրված են համալսարանի համակարգչային ներքին ցանցում, որտեղ նշված է յուրաքանչյուր գրքի գտնվելու վայրը:

Ամբիոններին կից կաբինետները, հետևողական համալրվում են համապատասխան գրականությամբ:

Ընդհանուր ընթերցողների թիվը կազմում է 2396, որից ուսանողներ՝ 1840, դասախոսներ՝ 206, աշխատողներ՝ 176, մագիստրանտներ 126, ասպիրանտներ՝ 13, այլ ոք՝ 35

Տեղեկատվություն հսկիչ ցուցանիշների.

Ընդհանուր հաճախումների թիվը 108.244

Տագրի է տրված 128.828 գիրք

Միջին հաճախումը 45

Միջին ընթերցանությունը 53

Միջին շրջանառությունը 1.2

Գործում է ներք ընթերցասրահ, որտեղ ընթերցողներին են տրամադրվում գրադարանում եղած գրքերի մեկական օրինակները և բաժանորդագրությունից ստացած թերթերն ու ամսագրերը: Համալսարանի կառուցվածքային փոփոխությունների հետ կապված, կազմակերպվել է որոշ ամբիոններին հատկացված գրականության հաշվառումը և նոր ակտավորումը:

Տեղեկատվական բաժինը իր լիարժեք գործունեությամբ արագացնում է գրադարանի ներքին աշխատանքները:

Գրքային ֆոնդը և ընթերցողական կազմը արտահայտված են համակարգչում, որն ավելի արդյունավետ է դարձնում գրադարանի աշխատանքները:

Գրադարանի կարևոր բաժիններից է էլեկտրոնային գրադարանը, որտեղ մուտքագրված են 43.500 միավոր գրքեր: Գրականության մուտքագրմանը օգնություն են ցույց տվել դասախոսները մոտ 363 միավոր գրքերով էլեկտրոնային գրադարանը ունի մշտական համացանց: Բացի մուտքագրած գրականությունից ընթերցողները հնարավորություն ունեն օգտվելու համացանցից: Հաշվետու ուս տարում էլեկտրոնային գրադարանից օգտվել են 899 ընթերցող:

Մեծ ուշադրություն ենք դարձնում մատենագիտական քարտագրումներին, որոնք հնարավորություններ են տալիս ընթերցողների թեմատիկ պահանջները բավարարելու համար:

Ծարունակվում է համալրվել «Գիտական տեղեկագրերի», «Ազգային - ազատագրական շարժմանը նվիրված ԼՂՀ հռչակման 25-ամյակին», «Մահ իմացնալ», «Գոյամարտի տարեգրություն», «Պատերազմը դեմքերում», թեմաներին նվիրված նյութերի մատենագիտական քարտագրումը: Կազմվել է «Հայոց ցեղասպանությանը» նվիրված հանձնարարական '25 էջի վրա: Ընթերցողներին մեծ օգնություն են ցույց տալիս լրացուցիչ ստեղծված «Նրա մասին», «ԱրՊՀ դասախոսների աշխատությունների» քարտարանները, որոնք օգնում են մատենագիտական թեմատիկ որոնումներին և սպասարկմանը:

Մշտական գործում են հոբելյանական տարելիցների և նոր ստացած գրականության ցուցադրական «Մեր օրացույցը», «Օրվա պարբերականներ», «Տոն օրերին նվիրված» ինչպես նաև «Նշանավոր հոբելյաններ» ստենդերը:

Ընթացիկ ուսումնական տարում կազմակերպվել են «Գրական ընթերցումներ» խորագրով ընթերցողական քննարկումներ: Անց է կացվել Լ.Ադյանի «Հեռացող եզերք» գրքի քննարկումը, նվիրված 90 -ականներին Բաքվի դեպքերի բացահայտմանը: Անց է կացվել «Լավագույն ընթերցող» մրցույթը, որտեղ լավագույն ընթերցող ֆակուլտետ է ճանաչվել բանասիրական ֆակուլտետը և նույն ֆակուլտետի լավագույն ընթերցողը՝ Հրաժին Խաչատրյանը: Գիտելիքի օրվա և ԼՂՀ հռչակման 25 -ամյակին նվիրված, կազմակերպվել է գրքի ցուցահանդես. ԱրՊՀ դասախոսների և ԼՂ գրողների աշխատություններից, մոտ 400 միավոր գիրք

Գրադարանը առաջնորդվում է ԱրՊՀ Գիտխորհրդի կողմից ընդունված նոր կանոնակարգով և գրադարանից օգտվելու կանոններով:

ԱրՊՀ արհեստակցական միություն – 2016թ.**Արհկոմիտեի նախագահ՝ Ա.Մ. Բարսեղյան**

ԱրՊՀ աշխատողների արհեստակցական կազմակերպությունը 2016թ. հաշվետու ժամանակաշրջանում նախատեսել էր օգնության ֆոնդում ունենալ 2,100,000/երկու միլիոն հարյուր հազար/ դրամ: Կոմիտեն՝ առանց հետաձգելու դիմորդների խնդրանքները քննարկել է դիմումները և նրանց տրամադրել պահանջվող օգնության գումարը: Տարվա ընթացքում դրամական օգնությունը կազմել է 2,090,000 դրամ:

ԱրՊՀ արհկոմիտեի 12 անդամները առավել ուշադրությամբ հետևում էին համալսարանի դասախոսներին և աշխատողներին հուզող հարցերին: Օգնությունը տրվել է հաշվի առնելով համալսարանի 22 ամբիոնների և դեկանատների առաջարկությունները, որոնք քննարկվել են կոմիտեի նիստում՝ հաստատվել և նոր միայն հանձնվել աշխատողներին:

Աշխատողների առողջարանային ուղեգրերի ձեռքբերման համար ծախսվել է 784,000/յոթ հարյուրութսունչորս հազար/ դրամ, աշխատողներից 21 հոգի իրենց հանգիստն են անցկացրել “Զերմուկ” և “Արզնի” առողջարաններում, յուրաքանչյուր աշխատողի տրվել է ուղեգրի 4 օրվա արժեքը, որը կազմել է 56,000/հիսունվեց/ հազար դրամ:

2016 թ. Հաշվետու ժամանակաշրջանում նշվել է համալսարանի աշխատողների 23 հոգու հոբելյանը, որի համար ծախսվել է 230, 000 /երկու հարյուր երեսուն հազար/ դրամ, յուրաքանչյուրին տաս հազարական դրամ:

Մարտի 8-ի առիթով շնորհավորել ենք համալսարանի արհմիության կանանց անհատական նվերներով, որի համար ծախսվել է 340,000/ երեք հարյուր քառասուն հազար/ դրամ:

Արհկոմիտեն 2016 թ. իրականացրել է մայիսի 9-ի եռատոնին նվիրված միջոցառումներ՝ դրամական օգնություն ցույց է տրվել Արցախի գոյամարտում զոհված ազատամարտիկների մայրերին, համալսարանում աշխատող կորած ազատամարտիկի մոր, գոյամարտում զոհված ազատամարտիկների հարազատներին՝ թվով 29 հոգու , Արցախյան պատերազմի II և III կարգի հաշմանդամների՝ թվով 10 հոգի: Այդնպատակի համար արհկոմիտեն իր ֆինանսական միջոցներից ծախսել է 390, 000 /երեք հարյուր ինսունհազար/ դրամ:

Արհկոմիտեն 2016 թ. լուրջ ուշադրություն է դարձրել միջոցառումների գեղարվեստական մակարդակը բարձր հիմքերի վրա պահելու հարցը:

Արհկոմիտեի կողմից կատարած աշխատանքի ոչ լրիվ թվարկումից հետո նշենք, որ անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել աշխատողների սոցիալական խնդիրներին և աշխատանքի կազմակերպչական կողմին, ինչը կօգնի արհմիության աշխատանքների ավելի լայն ծավալման գործընթացին:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եկամուտներ 59 826 հազ.դրամ

		2016թ պլան	2016թ փաստ
1.	Տարեսկզբի մնացորդը		13,1
2.	Արհ.անդամավճարներ		5.982.6
3.	Եկամուտ մնացորդով		5.995.7

Մնացորդ 13,1 հազ.դրամ

Ընդ. 59 957 հազ. Դրամ

Ծախսեր

		2016թ. պլան	2016թ. փաստ
1.	կուլտ. մասայ. ծախսեր		490,0
2.	էքսկուրսիաների կազմ.		
3.	Նյութական օգնություն		2,090,0
4.	Բուժման ուղեգրեր		784,0
5.	Աշխատավարձ		1,377,1
6.	Օգնություն/ծնունդներ/		230,0
7.	Արհմ. ակտ. օգնություն		170,0
8.	Այլ ծախսեր		23,0
9.	Արհմ. թերթի բաժանորդ.		128,0
10.	Տնտեսական ծախսեր		8,0
11.	ԼՂՀ Արհմիութ. ֆեդ. մասհանում		590,3
	Ընդամենը		5,890,4
	Բյուջետային մնացորդ		105,3

ՈւՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Պետ՝ Նարինե Վլադիմիրի Աբրահամյան

Ուսանողների հետ տարվող աշխատանքների, հանրային կապերի և լրատվության (այսուհետև՝ ՈւՀՏԱ, ՀԿ և Լ) բաժինը գործում է 2014-2015 ուսումնական տարվանից: Բաժինն աշխատանքներ է իրականացնում նշված 3 ուղղություններով:

Ուսանողների հետ տարվող աշխատանքներ: Հաշվետու ժամանակահատվածում բաժինն իրականացրել է ուսանողական, հասարակական և մարզամշակութային առօրյայի ակտիվացմանը, ուսանողների մտավոր, գաղափարական, հոգևոր զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր:

Այս ուղղությամբ բաժնի աշխատանքներն, ընդհանուր առմամբ, կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. ուսանողական կառույցների կարողությունների զարգացում,
2. աջակցություն համալսարանի ուսանողական կազմակերպությունների նախաձեռնություններին և ծրագրերին,
3. հանդիպում-քննարկումներ,

Ուսանողական կառույցների կարողությունների զարգացում և աջակցություն՝

- ուսանողների և ուսանողական կառույցների ղեկավարների հանդիպում ԱրՊՀ ղեկավար մարմինների հետ,
- ուսանողական կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողների մասնակցության արդյունավետությունը բարձրացում,
- հանդիպումներ հասարակական, քաղաքական, գիտության, արվեստի և սպորտի հայտնի գործիչների հետ:

Հանդիպում-քննարկումներ են կազմակերպվել ուսանողական կառույցների ներկայացուցիչների, առանձին խմբերի, անհատ ուսանողների, դասախոսների հետ: Ըստ անհրաժեշտության տրամադրվել է խորհրդատվություն՝ կապված ուսանողների իրավունքների, պարտականությունների, համալսարանի կանոնակարգերի և ուսանողների հետ առնչվող այլ իրավական ակտերի վերաբերյալ: Կատարվել է ուսանողների հետ առնչվող խնդիրների վերլուծություն:

Այս առումով առանձնացնել կարելի է.

1. Ֆակուլտետային ՈւԽ-ի վերակազմավորման աշխատանքներ, ըստ անհրաժեշտության՝ խորհրդատվություն:

2. Ուսանողական հանրակացարանի ուսանողների հետ հանդիպում և «Հանրակացարանում բնակվելու կանոնների» մասին քարոզչական աշխատանքներ:

3. ԱրՊՀ ուսանողական հանրակացարանում ստեղծագործական ակտիվության բարձրացման նպատակով՝ (ուսանողների առօրյան հետաքրքիր դարձնելու, ակտիվ, տաղանդավոր ուսանողների բացահայտում) «Դե՛ աղջիկներ» մրցույթի նախաձեռնություն և կազմակերպում:

4. ԱրՊՀ ուսանողական հանրակացարանի դիմումների ընդունում և ընթացքավորում:

5. Ուսանողների գիտական, կրթական, բարոյական և ստեղծագործական վերելքի խթանման նպատակով կայացել է հանդիպում բոլոր ֆակուլտետների կուրսերի ավագների հետ և իրականացվել քարոզչական աշխատանքներ՝

ա) ավագի իրավունքները և պարտականությունները

բ) ուսանողի բարոյահոգեբանական արժեքամակարգ և վարքականոն

6. Բոլոր տարաբնույթ միջոցառումների, հանդիպումների, արշավների, երթերի նախապատրաստական աշխատանքներ, ըստ անհրաժեշտության՝ ուսանողների հաշվառում, ցուցակագրում. հասարակական ակտիվության հաշվառման հետ կապված աշխատանքներ:

7. Պարբերաբար տեղեկատվություն է տրամադրվել ուսանողներին հետևյալ հարցերի վերաբերյալ՝ ա/ուսման և այլ վճարների գանձման կանոնակարգ

բ/կրթաթոշակ տրամադրելու կարգ

գ/հայցորդների ձևակերպման կարգ

դ/հանրակացարանում ուսանողների բնակության կարգ(1-ին անգամ դիմած ուսանողները)

8. «Արցախի պետական համալսարան» և «Քո ժամանակը» թերթերի տարածում. ֆակուլտետներում և ստորաբաժանումներում: Հայտարարությունների տարածում ֆակուլտետներում:

9. Բոլոր տարաբնույթ միջոցառումների, հանդիպումների մասին ըստ անհրաժեշտության՝ իրազեկում ամբիոններին, ֆակուլտետներին և ստորաբաժանումներին:

10. Ըստ անհրաժեշտության՝ ուսանողներն իրազեկվել են հանդիպումների, խրախուսանքների, պատվոգրերի, շնորհակալագրերի տրամադրման հետ կապված տեղեկատվության մասին:

Համալսարան-բանակ կապը այս տարի ևս շարունակական ծրագրերի մաս են կազմել: Ստեփանակերտ քաղաքի զորամասերից մեկում Հայրենյաց պաշտպանի օրվան նվիրված տոնական համերգ է կազմակերպել պրեռեկտոր Վ. Յարամիշյանի, դեկան Շ. Այդինյանի, բաժնի աշխատողների և ուսանողական ակտիվի մասնակցությամբ:

Հանրապետությունում վերջին զարգացումները՝ կապված սահմանին լարված իրավիճակով, բռնկեցին է նաև ԱրՊՀ-ի թե դասախոսական, թե ուսանողական կազմին:

Համալսարանի ուսանողության կողմից ինտենսիվ աշխատանքներ են կազմակերպվել գյուղնախարարության պահեստներում զինվորների համար կապոցներ պատրաստելու նպատակով: Համալսարանի կողմից ևս պարբերաբար նվերներ և կապոցներ են տրամադրվել սահմանին կանգնած զինվորներին:

Հաշվետու տարում աննախադեպ էր ԱրՊՀ ուսանողների մասնակցությունը ՀՀ-ում կազմակերպված ամառային միջոցառումներին:

ԱրՊՀ թիմը / բաղկացած 9 հոգուց/ մասնակցել է Բազե համահայկական հավաքին: Շուրջ 20 ուսանողներ հանգստացել են Դիլիջանի «Տեսեսագետ» առողջարանում:

ԱրՊՀ-ն մասնակցություն է ունեցել Տոհմի ամառային ճամբարին:

Հանրային կապեր: Այս ուղղությամբ բաժինն իրականացրել է աշխատանքներ, որոնք ուղղված են եղել ԱրՊՀ գործունեության և նրա վարկանիշի բարձրացմանը տեղեկատվական և քարոզչական բնույթի միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը, հանրային նշանակության տարաբնույթ միջոցառումների (այդ թվում՝ տոն օրերին նվիրված միջոցառումների, համաժողովների, հավաքների, երթերի) կազմակերպմանը, հանրապետության սահմաններում և դրանից դուրս գործող ուսումնական կրթական հաստատությունների հետ համագործակցային կապերի հաստատմանն ու ամրապնդմանը, համատեղ միջոցառումների կազմակերպմանը, հանրապետության երիտասարդական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցային ծրագրերի իրականացմանը: Բաժինը համագործակցում է ԼՂՀ-ում գործող տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների և անհատ լրագրողների, ինչպես նաև ԼՂՀ ԱԳՆ, ԵՊՀ, ՀՌՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների, հանրային կապերի և լրատվության բաժինների հետ:

ՈւՀՏԱ, ՀԿ և Լ բաժնի ուշադրության առանցքում է եղել նաև բուհ-դպրոց համագործակցությունը: Ստեփանակերտ N 8 և N 11 ավագ դպրոցների աշակերտները մասնակցել են բաժնի կողմից

կազմակերպած միջոցառումներին: Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից կազմակերպվեց նաև ավանդական դարձած համալսարանի աշխատակիցների մանկահասակ երեխաների համար հեքիաթային կերպարների մասնակցությամբ միջոցառումը՝ նվիրված Երեխաների պաշտպանության միջազգային տոն օրվան: Միջոցառմանը մասնակցում էին նաև Թալիշից և Մատաղիսից տեղահանված մինչև 12 տարեկան երեխաները, որոնց համար համալսարանը պատրաստել էր նվերներ և քաղցրավենիք:

Լրատվություն: Այս ուղղությամբ բաժինն իրականացրել է աշխատանքներ, որոնք նպաստել են ԱրՊՀ ինտերնետային ռեսուրսների ակտիվացմանը, պաշտոնական կայքէջի զարգացմանը, սոցիալական-տեղեկատվական ցանցերում ներկայացվածությանը, հետադարձ կապի ապահովմանը, «Արցախի համալսարան» պաշտոնաթերթի, «Քո ժամանակը» ուսանողական ամսաթերթի, ԱրՊՀ մասին պատմող տեսանյութերի, լուսանկարների և տպագրական նյութերի ստեղծմանն ու տարածմանը: Իրականացվել է տպագիր և էլեկտրոնային մամուլում ԱրՊՀ անդրադարձների դիտարկում, վերլուծություն և տեղայնացում:

ՈւՀՏԱ, ՀԿ և Լ բաժնի կողմից կազմակերպվել են մի շարք միջոցառումներ.

1. ԱրՊՀ առաջին կուրսեցիների երդման արարողություն
2. Հայ-Սլավոնական համալսարանի հետ համատեղ համերգային ծրագր
3. ԱրՊՀ 46-ամյակին նվիրված ինտելեկտուալ խաղի և տոնական համերգային ծրագրի կազմակերպում
4. Ուսանողների միջազգային օրվան նվիրված տոնական միջոցառում
5. Ամանորյա տոնական ծրագրի կազմակերպում՝ գիշերօթիկ դպրոցի երեխաների ներգրավմամբ
6. Հայրենիքի պաշտպանի օրվան նվիրված միջոցառում
7. Գեղեցկության և մայրության միամսյակին նվիրված տոնական համերգ
8. ԼՂՀ ՊԲ-ի թիկունքի աշխատանքների կազմակերպում, ուսանողական խմբերի ձևավորում(շուշ մեկ ամիս)
9. Երեխաների միջազգային օրվան նվիրված համերգային ծրագրի կազմակերպում /Թալիշ գյուղից տարհանված երեխաների համար/
10. Տոնական և հիշատակի օրերին նվիրված երթերի կազմակերպում
11. Շաբաթօրյակների և արշավների կազմակերպում

ԱրՊՀ հանրակացարանի համար դիմումների ընդունում

ԱրՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածում			
N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՔԱՆԱԿԸ	2014-15/2015-16
1.	Ինտերնետային ռեսուրսների զարգացում	ԱրՊՀ պաշտոնական կայքէջի ինտերֆեյսի ձևավորում, ներքին ցանցի համակարգում	-
2.	«Արցախի համալսարան» պաշտոնաթերթ	Տպագրված 9 համար	-

3.	«Քո ժամանակը» ուսանողական ամսաթերթ		Տպագրված 8 համար		-		
4.	asu.am պաշտոնական կայքէջ		Ներբեռնված 172 տպագիր նյութ		2014-15	2015-16	
					77 նյութ	172 նյութ	
5.	asu.am պաշտոնական կայքէջ (հաճախելիություն)		2011	2012	2013	2014	2015
			2917	20269	47787	48200	49300
6.	ԱրՊՀ-ն Facebook-ում		172 հղում` համապատասխան լուսանկարներով		2013-14	2014-15	15-16
	հետևողների քանակը						
	2014-15	2015-16				172 հղում	177
	1860	2200					
7.	ԱրՊՀ-ն Одноклассники-ում		100-ից ավելի հղում` համապատասխան լուսանկարներով		2014-15	2015-16	
	հետևողների քանակը				-	100-ից ավելի հղում	
	2014-15	2015-16					
	340	400					
8.	Տեսանյութեր		4 կարճամետրաժ ֆիլմ, մոտ 35 տեսանյութ, նույնքան` թվայնացված		-		
9.	Հեռուստատեսության		տեղադրված մոտ 61 նյութ				
10.	Տեղեկատու գրքույկ		4		-		
11.	Տեղեկատվական- գովազդային պաստառ		2		-		

Վերոհիշյալ բոլոր միջոցառումները կազմակերպվել են ՈւՀՏԱ, ՀԿ և Լ բաժնի և ԱրՊՀ ՈւԽ-ի հետ համատեղ:

ԱրՊՀ ՄԵԾ ԴԱՀԼԻՃՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ			
01.09.2015		ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԴԱՄՆ ԱՐՊՀ-ՈՒՄ ԱԺ նախագահ Աշոտ Դուլյան, պաշտպանության նախարար-պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյան, ԿԳ և սպորտի նախարար Սլավա Ասրյան:	Ռեկտոր- Մինասյան, դասախոսներ, ուսանողներ
18.09.2015		20 ՌԵԿՏՈՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՄԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ	դասախոսներ, ուսանողներ

02.10.2015		ՄԻԶՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՅՈՒՆ ԵՐԱՇԽԻՔ Արցախի պետական համալսարան-Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան համագործակցության շրջանակներում հոկտեմբերի 2-3-ը Արդշ-ում հյուրընկալվել էր ՀՌՀ պալիթրակությունը՝ ռեկտոր Արմեն Դարբինյանի գլխավորությամբ	Ռեկտոր- Մինասյան, դասախոսներ, ուսանողներ
05.10.2015		ԱՅԼԵՎՍ ԵՐԲԵՔ...Հանդիպում Հայկ Դեմոյանի հետ	Ռեկտոր- Մինասյան, դասախոսներ, ուսանողներ
30.10.2015		ԱՐԴՆ-Ն ՏՈՒՆՈՒՄ Է 46-ԱՄՅԱԿ Ինտելեկտուալ խաղ	Ռեկտոր- Մինասյան, դասախոսներ, ուսանողներ
18.11.2015		ՆԵՐՖԱԿՈՒՆԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՕՐՎԱՆ Ճարտարագիտ. ֆակուլտետ	դասախոսներ, ուսանողներ
01.12.2015		ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏ	Ռեկտոր- Մինասյան, դասախոսներ, ուսանողներ
22.12.2015		Արդշ ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԽՐԱԽՈՒՄՎԵԼ ԵՆ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐՈՎ	դասախոսներ, ուսանողներ
28.01.2016	10.00	Արդշ Գիտական խորհրդի ընդլայնված նիստ:	Ռեկտոր- Մինասյան, դասախոսներ, ուսանողներ
21.01.2016	10.00	Արիության դաս: Հանդիպում գնդապետ Նորայր Մկրտչյանի հետ:	դասախոսներ, ուսանողներ
23.02.2016	13.30	“Հայոց լեզուն տունն է հայուն”-գրական երաժշտական միջոցառում	դասախոսներ, ուսանողներ
12.03.2016	13.30	Համերգ նվիրված կանանց տոնին	դասախոսներ, ուսանողներ
14.03.2016	13.30	Խաղ-մրցույթ: Բնագիտական ֆակուլտետ:	դասախոսներ, ուսանողներ
02.06.2016	13.30	Տոնական միջոցառում:	դասախոսներ, ուսանողներ
22.06.2016	11.00	Հանդիպում ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանի հետ:	նախարար, ռեկտոր, դասախոսներ, ուսանողներ
30.06.2016	11.00	Դիպլոմների հանձնում:	նախարար, ռեկտոր, դասախոսներ, ուսանողներ

ԱՐԴՆ ԵՐԲԱՅՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ		
25.02.2016	Դասընթաց՝ Գտիր քո ապագան խորագրով Արցախի Երիտասարդության զարգացման կենտրոն	
14-15.03.2016	Շախմատի ներֆակուլտետային մրցաշար Արդշ պատմության և իրավագիտության ֆակուլտետ Արկադի Ալեքսիսյան	
24.03.2016	Թեմա Հայաստանի պարոզությունը Ադրբեջանում ադրբեջանագետ Ան ժելա Էլիբեգովան սոցիոլոգ Արմինե Ադիբեկյան	
26.03.2016	հյուրընկալվել էր ՀՀ փաստաբանական պալատի ներկայացուցչական կազմը նախագահ Արա Զոհրաբյանի գլխավորությամբ:	

06.04.2016	ծանոթացնել պատերազմական շրջանում համացանցից արդյունավետ օգտվելու միջոցներին ուղղված հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող Վահրամ Միրաքյան	
ԱՐՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ ԿԱԶՄԶԿԵՐՊՈՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ		
01.09.2015	հյուրընկալվել էին Եվրոպայի ազատ դաշինքի նախագահ Ֆրանսուա Ալֆոնսին, Եվրախորհրդարանի պատգամավոր Ջորդի Սեբաստիան Հայաստանի եվրոպացի բարեկամներ կազմակերպության տնօրեն Էդուարդո Օչոան	
04.09.2015	Ֆրանսիայի Սոցիալիստական խմբակցության ղեկավար Բրունո Լերուն խմբակցության քարտուղար Ֆրանսուազ Դյուման, ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի և քաղաքական հարցերի գրասենյակի տնօրեն Կիրո Մանոյան	
11.09.2015	հանդիպում Բելգիայի Թագավորության Խորհրդարանի պատգամավորներ հետ ժյուլի դը Գրոտը, Անդրե դյու Բյուս դե Վարնաֆ, Կարիմ վան Օվերմեյեր, Էրվե Դուայեն, Ֆաթումատա Միդիբե, Սիմոն Զուսկինդ, Գասպար Կարապետյանը, Վահրամ Բալայան	
19.10.2015	հանդիպում ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանի հետ	ԱրՊՀ իրավագիտության բաժնի մի խումբ ուսանողներ և դասախոսներ
30.10.2015	Իրավագիտության, քաղաքագիտության և տնտեսագիտության արդիական թեմաներով դասախոսություններ	ՀՌՀ իրավունքի նրա քաղաքականության ինստիտուտի տնօրեն Լ. Ալավերդյանը, ի.գ.թ., դոցենտ Ա. Ղամբարյանը, ի.գ.թ., դոցենտ Ա. Թունյանը, Ա. Խզմալյանը, Վ. Հովհաննիսյանը, Ա. Նավասարդյանը, Մ. Քալաշյանը:
03.11.2015	հանդիպում «Արցախբանկ» ՓԲԸ վարչության նախագահ, գործադիր տնօրեն Արթուր Մխիթարյանի հետ	ԱրՊՀ մի խումբ ուսանողների
18.11.2015	Տոնական միջոցառում՝ նվիրված Ուսանող իմիջագային օրվան:	ԱրՊՀ ուսանողներ դասախոսներ
09.12.2015	Հանդիպում ԼՂՀ գլխավոր դատախազ Արթուր Մոսիյան հետ	ԱրՊՀ իրավագիտության բաժնի ուսանողներ, դասախոսներ

22.12.2015	ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս ԼՂՀ վերաքննիչ, դատարանի դատավոր Հասմիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր ուսանողական գիտաժողով՝ նվիրված ԼՂՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության իրականացման գործընթացին	ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, արդարադատության նախարար Արարատ Դանիելյանը, գերագույն դատարանի նախագահ Նարինե Նարինյանը, ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը դատավորներ, դասախոսներ, ուսանողներ
25.12.15	«Սոցիալական արդարություն» կուսակցության ղեկավար Գարեն Օհանջանյանի նախաձեռնությամբ հանդիպում պ.գ.դ., ակադեմիայի թղթակից անդամ, թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանի հետ	ԱրՊՀ մի խումբ դասախոսների և ուսանողներ
20.01.2016	Հանդիպում հեռակա ուսուցման համակարգի մի խումբ ուսանողների հետ	ԱրՊՀ ՈւՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյան
22.01.2016	ԼՂՀ կառավարության ֆինանսավորմամբ Գարեն Օհանջանյանի նախաձեռնությամբ ԱրՊՀ ղեկավարության աջակցությամբ կյանքի կոչված «Ոչ ֆորմալ կրթության զարգացման ծրագրի» շրջանակներում դասախոսություն: ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյան:	
28.01.2016	Արիության դաս Հայոց բանակի կազմավորման կապակցությամբ: ԼՂՀ ՊԲ անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժնի պետ, գնդապետ Նորայր Մկրտչյան	
25.02.2016	ԼՂՀ կառավարության ֆինանսավորմամբ Գարեն Օհանջանյանի նախաձեռնությամբ ԱրՊՀ ղեկավարության աջակցությամբ կյանքի կոչված «Ոչ ֆորմալ կրթության զարգացման ծրագրի» շրջանակներում հյուրընկալվել է կ.գ.դ., պրոֆ. ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էթնոցենոմիկայի լաբորատորիայի վարիչ Լևոն Եպիսկոպոսյանը:	
26.02.2016	Հանդիպում Արցախի Հանրային հեռուստառադիո ընկերության խորհրդի նախագահ Նորել Գասպարյանին գլխավոր խմբագիր Արմինե Հայրիյանի հետ:	ԱրՊՀ լրագրության բաժնի դասախոսների և ուսանողներ
05.03.2016	ԱրՊՀ նախաձեռնությամբ կազմակերպվել էր հայագիտական կենտրոնի նժդեհյան ընթերցումներ նվիրված Գարեգին Նժդեհի ծննդյան 130-ամյակին	բուհի ղեկավարությունը, զինվորականներ հյուրեր, բացման խոսքով հանդես է եկել գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը:
03.03.2016	ԼՂՀ կառավարության ֆինանսավորմամբ Գարեն Օհանջանյանի նախաձեռնությամբ ԱրՊՀ ղեկավարության աջակցությամբ կյանքի կոչված «Ոչ ֆորմալ կրթության զարգացման ծրագրի»	

	շրջանակներում հյուրընկալություն .Թեքնոլոգի ընդ սայրնս դինամիքսն ընկերության նախագահ և գործադիր տնօրեն Վահան Շաքարյան	
11.03.2016	ԼՂՀ կառավարության ֆինանսավորմամբ և Կարեն Օհանջանյանի նախաձեռնությամբ ԱրՊՀ ղեկավարության աջակցությամբ կյանքի կոչված «Ոչ ֆորմալ կրթության զարգացման ծրագրի» շրջանակներում ԱրՊՀ- ում հյուրընկալվեց ՀՀ արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Շավարշ Քոչարյանը	Համալսարանի ուսանողներ
14-16.03.2016	.Հայ դատին հանձնախմբի նախաձեռնությամբ Արցախում գտնվող Բելգիայի Թագավորության Ֆլանդրիայի Խորհրդարանական պատվիրակության անդամներից պրոֆեսոր Փոլ Միրթսը հյուրընկալվել էր մայր բուհում	
19.03.2016	Արցախի Հանրապետության հռչակման 25-րդ տարեդարձի միջոցառումների շրջանակներում կայացել է պ.գ.թ., դոցենտ, պատմության ամբիոնի վարիչ Վարդգես Սաֆարյանի .Արցախի հին և միջնադարյան պատմության ու մշակույթի կեղծարարությունը աղբրեջանական պատմագիտության մեջն գրքի շնորհանդեսը:	
19.03.2016	ԱրՊՀ ուսումնական գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը հանդիպել է ուսանողական խորհրդի անդամների հետ:	
22.03.2016	ԼՂՀ կառավարության ֆինանսավորմամբ և Կարեն Օհանջանյանի նախաձեռնությամբ ԱրՊՀ ղեկավարության աջակցությամբ կյանքի կոչված «Ոչ ֆորմալ կրթության զարգացման ծրագրի» շրջանակներում ԱրՊՀ-ն հյուրընկալել էր հուշարձանագետ, պատմաբան, բանահավաք, «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի» Երևանյան գրասենյակի նախագահ Սամվել Կարապետյանին	
25.03.2016	ԱրՊՀ է այցելել Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի ուսանողներից ու դասախոսներից կազմված երեսուն հոգանոց պատվիրակությունը	
23.03.2016	ԼՂՀ կառավարության ֆինանսավորմամբ և Կարեն Օհանջանյանի նախաձեռնությամբ ԱրՊՀ ղեկավարության աջակցությամբ կյանքի կոչված «Ոչ ֆորմալ կրթության զարգացման ծրագրի» շրջանակներում ԱրՊՀ- ականների հետ հանդիպում է ունեցել դիզայներ Դավիթ Սալաքյանը՝ հանդես գալով «Նորաձևության դերը հասարակության կյանքում» թեմայով դասախոսությամբ	
26.03.2016	ԱրՊՀ-ում հյուրընկալվել էր ՀՀ փաստաբանական պալատի ներկայացուցչական կազմը՝ նախագահ Արա Զոհրաբյանի գլխավորությամբ	
08.04.2016	ԱրՊՀ-ն մասնակցել է .Նորանկախ Հանրապետությունների համալսարանների ասոցիացիային կողմից կազմակերպված միջազգային առցանց կոնֆերանսի: Կոնֆերանսին մասնակցում էին ասոցիացիայի անդամ երկրների՝ Աբխազիայի Հանրապետության, Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության, Հարավօսեթական հանրապետության և Արցախի Հանրապետության Պետական համալսարանները: Կոնֆերանսը համակարգվում էր Ստեփան Բորդանի Բերիլի կողմից	
23.04.2016	ԱրՊՀ մի խումբ ուսանողների հետ հանդիպման ընթացքում Լարիսա Ալավերդյանը ներկայացրել է փաստահավաք խումբ ստեղծելու և նրա գործունեության նպատակները:	
27.04.2016	ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը հանդիպում է ունեցել ԱրՊՀ իրավագիտության բաժնի մի խումբ	

	<i>ուսանողների հետ:</i>	
18.06.2016	ԼՂՀ կառավարության ֆինանսավորմամբ և Կարեն Օհանջանյանի նախաձեռնությամբ ԱրՊՀ ղեկավարության աջակցությամբ կյանքի կոչված «Ոչ ֆորմալ կրթության զարգացման ծրագրի» շրջանակներում ՀՀ առաջատար երեք ընկերությունների փորձառու մասնագետներ <<ԱՅԲ>> դպրոցի նախագծային ուսուցման ծրագրի ղեկավար Գոհար Մալումյանը, ներդրումային ընկերության ներկայացուցիչ, ֆինանսական վերլուծաբան Վալերիա Արզանգուլյանը, ռազմավարության գծով ղեկավար Ռադիկ Վերդյանը դասախոսությամբ հանդես են եկել ԱրՊՀ –ում:	
21.06.2016	Արևելագետ, տնտեսագետ, Իսրայելի, Մերձավոր և Միջին Արևելքի առաջատար փորձագետ, <<Մերձավոր Արևելքի ինստիտուտ>> անկախ գիտական կենտրոնի և ախագահ Եվգենի Սատանովսկին հյուրընկալվել է ԱրՊՀ –ում:	
26.07.2016	Արցախի պետական համալսարանի գիտխորհրդի նիստերի դահլիճում ԼՂՀ նախագահին կից սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպվեց սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի հանրային քննարկում, որին, հանձնաժողովի անդամներից բացի, ներկա էին նաև դատական համակարգի ներկայացուցիչներ, հանրապետության բուհերի իրավագիտության, քաղաքագիտության և պատմության մասնագիտության դասախոսներ, մտավորականներ:	
24.08.2016	Արցախի պետական համալսարանը համագործակցության պայմանագրեր ունի ՀՀ և արտասահմանյան երկու տասնյակից ավելի բուհերի հետ: Այս շարքից ակտիվ համագործակցության տեսանկյունից առանձնանում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, որի պատվիրակությունը՝ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի գլխավորությամբ ԱրՊՀ-ում էր:	

Ուսանողական խորհուրդ

ԱրՊՀ ՌԻԽ ՆԱԽԱԳԱՀ՝

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԱրՊՀ Ուսանողական խորհուրդն /ՌԻԽ/ իր գործունեությունն իրականացնում է Կանոնադրությանը համապատասխան՝ ակտիվորեն համագործակցելով ՈւՇՀՀՏԱԳ պրոռեկտորի, ՈւՀՏԱ ՀԿ և Լ բաժնի, ԱրՊՀ այլ ստորաբաժանումների հետ:

ՌԻԽ 2015-2016 ուս. տարվա հաշվետվությունը կազմված է ֆակուլտետների ուսանողական խորհուրդների հաշվետվությունների հիման վրա: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետներում զգալի աշխատանքներ են կատարվել ուսանողների ուսումնագիտական գործունեությունն ու ակտիվ ստեղծագործական կյանքը

բովանդակալից դարձնելու ուղղությամբ, կազմակերպվել են բազմաթիվ ուսումնական, մշակութային և ժամանցային միջոցառումներ, որոնց մասնակցել են մեծ թվով ուսանողներ:

Կարևոր միջոցառումներից են պարբերական հանդիպումներն ու քննարկումները, որոնցից կարելի է առանձնացնել ԱրՊՀ ՈւՄ և ՖՈՒՄ-երի ներկայացուցիչների հանդիպումները ԱրՊՀ ղեկավարության հետ: Դրանց ժամանակ քննարկվել և իրենց լուծումներն են ստացել ուսանողական կարևոր հարցեր: ՈւՄ-ն հանդիպումներ է ունեցել նաև ԼՂՀ կառավարության ներկայացուցիչների, ԼՂՀ սոցիալական զարգացման հիմնադրամի աշխատակիցների հետ, քննարկել մեր երկրում իրականացվող կրթական քաղաքականության, մասնավորապես, ներքաղաքային տրանսպորտից օգտվելու և զեղչի կտրոններ ձեռք բերելու հարցերը: Տարվա հանդիպումներից էր նաև Հունգարիայի Պիտեր Պազմանի համալսարանից ժամանած մի խումբ ուսանողների հետ հանդիպումը՝ համալսարանի ղեկավարության հետ համատեղ:

ՈՒՄ-ն իր մասնակցությունն ապահովել է նաև ԼՂՀ կառավարության աջակցությամբ իրականացվող կրթական ծրագրերին, այդ թվում՝ <<ոչ ֆորմալ կրթության >> ծրագրին, որը հաջողությամբ իրականացվում է համալսարանում:

Ուսումնական տարվա սկզբին, առաջին կուրսեցիների երդման արարողությունից հետո, բոլոր ֆակուլտետների ՖՈՒՄ-երը կազմակերպել են ծանոթության երեկոներ՝ նպատակ ունենալով ավագ կուրսեցիների փորձն ու գիտելիքները փոխանցել առաջին կուրսեցիներին: ՖՈՒՄ-երի կողմից բոլոր ֆակուլտետներում կազմակերպվել են նաև ինտելեկտուալ խաղեր, որոնց հաջորդել է միջֆակուլտետային փուլը: Միջֆակուլտետային բնույթ է կրել նաև դեկտեմբերի 9-ին կայացած <<Ուրախ մեկնարկներ>> մարզական մրցույթը, իսկ ԼՂՀ անկախության 25-րդ տարեդարձին ընդառաջ կազմակերպվել է վոլեյբոլի միջֆակուլտետային մրցույթ՝ աղջիկների միջև:

Կազմակերպել ենք նաև համալսարանական և արտահամալսարանական շաբաթօրյակներ՝ Մեծ Հայրենականում և Արցախյան պատերազմում զոհվածների հուշահամալիրում, <<Մենք ենք, մեր սարերը>> հուշակոթողի, Բեկորի հուշարձանի հարակից տարածքներում: Ուսանողների նախաձեռնությամբ, նրանց իսկ ուժերով, համալսարանի մասնաշենքերի ներսում կատարվել են հարդարման աշխատանքներ՝ նպատակ ունենալով վերականգնելու պատերի նորմալ տեսքը և մաքրելու ավելորդ գրառումները:

2015թ.-ի դեկտեմբերին կայացել է ուսանողական համագումար, որը լսել է ՈւՄ նախագահի հաշվետվությունը, ընդունել ՈւՄ-ի նոր կանոնակարգը և որոշում ընդունել այն ԱրՊՀ Գիտական խորհրդի և ԿԳՍ նախարարության հաստատմանը ներկայացնելու վերաբերյալ:

Ռազմահայրենասիրական ուղղությունը մշտապես եղել է ԱրՊՀ ՈՒՄ գործունեության գլխավոր առանցքը: Դեկտեմբերի 25-ին, ամանորյա տոներին ընդառաջ, ՊԲ զինվորների համար ԱրՊՀ ուսանողների, դասախոսների, աշխատակիցների կողմից պատրաստվել և առաքվել են նվերներ, իսկ զորամաս կատարած այցելության ժամանակ ուսանողները համոտեսել են զինվորական ճաշատեսակները, ներկայացրել մշակութային հետաքրքիր ծրագիր: Հայրենյաց պաշտպանի օրվա առթիվ նույնպես մի խումբ ակտիվ ուսանողներ այցելել են Ստեփանակերտում տեղակայված N զորամաս, ծանոթացել զորամասի մարտական ուղուն, օրվա կարգացուցակին, շրջայց կատարել զորամասում և երգ ու պարով ոգևորել հայրենյաց պաշտպաններին, շնորհավորել տոնի կապակցությամբ:

ՈւՄ-ի կողմից համապատասխան նվերներով այցելություններ են կատարվել նաև մեծահասակների խնամքի պետական հաստատություն և երեխաների խնամքի գիշերօթիկ դպրոց: Հատկապես օգտակար և նշանակալից էր 2015թ. վերջին այցելությունը գիշերօթիկ դպրոց՝ ամանորյա տոներին ընդառաջ, որի ընթացքում երեխաները ոչ միայն ուսանողների ուղեկցությամբ զբոսնել են Ստեփանակերտի տեսարժան վայրերում, այլև

մանկավարժ-ուսանողներն անձնապես ծանոթացել են նրանց հետ և նրանց համար իրականացրել ամանորյա բովանդակալից ծրագիր:

Մեր ուսանողները նաև անտարբեր չմնացին մեր երկրում և աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ: Մասնավորապես, կազմակերպվեց հիշատակի մոմավառություն՝ նվիրված Ֆրանսիայում տեղի ունեցած ահաբեկչությունից տուժած անմեղ զոհերի հիշատակին:

Ամենամեծ փորձությունը եղավ Ապրիլյան պատերազմը, որը ևս մեկ անգամ ապացուցեց, որ հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ մեր կատարած աշխատանքը տվել է իր արդյունքները: ԱրՊՀ տղա ուսանողները, ովքեր ի վիճակի էին զենք կրելու, մեկնեցին ռազմաճակատ, նրանցից շատերը կոմիտասի քաջաբար և վերադարձան մեղալիներով ու պատվոգրերով: Աղջիկներից կազմված կամավորական խմբերը շաբաթներ շարունակ աշխատում էին պարենային և իրային պահեստներում՝ բաշխելով հանգանակած օգնությունը: Իրավիճակի կայունացումից հետո ԱրՊՀ ՈԻԽ-ն կրկին ձեռնամուխ եղավ կանոնադրային պարտականությունների կատարմանը:

ԱրՊՀ ՈԻԽ մշտական հանձնաժողովները նույնպես որոշակի աշխատանքներ են կատարել իրենց վստահված ուղղություններով: Այսպես, ՈԻԽ սոցիալական հարցերի գծով հանձնաժողովը, ուսումնասիրելով 2015թ. հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին ԱրՊՀ հանրակացարանում բնակվող ուսանողների կողմից ծախսված էլեկտրաէներգիայի դիմաց առաջացած և ուսանողների կողմից չվճարված գումարի խնդիրը, առաջարկեց դրա մի մասը փոխհատուցել ԱրՊՀ ՈԻԽ-ին հատկացվող միջոցների հաշվին, ինչը և կատարվեց: Նույն հանձնաժողովի միջնորդությամբ ՈԻԽ հատկացվող միջոցների հաշվին անապահով ուսանողների համար կատարվեց ուսման վարձավճարի գեղչ, խրախուսվեցին <<Մայրության և գեղեցկության>> տոնին նվիրված միջոցառման, կամավորական աշխատանքների մասնակիցները:

Ուսանողական ամառը նույնպես հետաքրքիր անցավ: ԱրՊՀ ուսանողները մասնակցեցին ոչ միայն գործընկեր բուհերի՝ ԵՊՀ-ի, ՀՊՏՀ-ի, ՀՊՄՀ-ի, ՀՌՀ-ի, ՀՊՃՀ-ի, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից առաջարկված ամառային հավաքներին, ճամբարներին ու դպրոցներին, այլ նաև Պատարայում ԱրՊՀ կազմակերպած փորձուսուցում-ճամբարին:

Հաշվետու ուսումնական տարում ավելացել է ակտիվ ուսանողների քանակը:

ԲՈՒԺԿԵՏ

Բուժկետի վարիչ՝ Ռ.Պետրոսյան

2015-2016թթ. Ուսումնական տարում բուժկետ են հաճախել 2659 մարդ, որից 586 ուսանող, 2073 աշխատող:

1-ին բուժօգնության համար դիմել են

- 1.Արյան ճնշում չափելու համար 1178 մարդ
- 2.մրսածություն 314 մարդ
- 3.սիրտանոթային համակարգի հետ կապված 327 մարդ
- 4.գլխացավ 519 մարդ
- 5.քթի արյունահոսության 4 մարդ
- 6.տրավմա կտրվածվերքեր, այրվածք, հոդախախտ 78 մարդ
7. երիկամային հիվ. հետ կապված 2 մարդ
- 8.աղեստամոքսային տրակտի հիվ. հետ կապված 24 մարդ
9. ալերգիա 5 մարդ
10. վահանաձև գեղձի հիվ. հետ կապված 2 մարդ
- 11.նեվրոզ 4 մարդ

12.ատամնացավի հետ կապված 32 մարդ

Հաճախակի դիմող քրոնիկ հիվանդներ

1.սրտի վիրահատումով 2 մարդ

2.շաքարախտ 3 մարդ

3.հիպերտոնիա 9 մարդ

4.երիկամաքարային 1 մարդ

5.անեմիա 2 մարդ

6.ալերգիա 3 մարդ

7. նեվրոզ 2 մարդ

Կոնսուլտացիայի է ուղարկվել

1.թերապևտի 41

2.կարդիոլոգի 17 մարդ

3.ԼՈՐ 3 մարդ

4.ատամնաբուժի 21 մարդ

5.էնդոկրինոլոգի 2 մարդ

6.նեվրոպատոլոգի 4մարդ

7. հեմոտոլոգի 2 մարդ

8.ալերգոլոգի 3 մարդ

9.ռևմատոլոգի 3 մարդ

Բժշկի նշանակումով կատարվել է ներերակային 10 սրսկում, միջմկանային 42 սրսկում:

